ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2026 թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանին
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Ի պատասխան Ձեր 29.12.2025թ.-ի հարցման

Հարգելի պարոն Բալասանյան

Ներկայացնում եմ 2021-2025թթ. ընթացքում ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում վճարված պարգևատրումների վերաբերյալ տեղեկատվություն(տեղեկատվությունը կցվում է):

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-01-08 16:31:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքով՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4 34 99, 055 72 01 67

2021-2025ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում 2021-2025թթ.-ի ընթացքում պարգևատրումներ տրվել են «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ», «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» և «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածներով հատկացված գումարներից:

«Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված գումարներից պարգևատրումները տրվել են հիմնականում մարզպետի աշխատակազմի բոլոր աշխատակիցներին, այդ թվում մարզպետին և մարզպետի տեղակալներին: Գումարը աշխատակիցներին հատկացվում է ամսական կտրվածքով: Մարզպետի և տեղակալների պարգևատրումը իրականացվում է գաղտնի ընթացակարգով:

«Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարները համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի տրվել է մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին՝ ըստ իրենց կիսամյակի կատարողականների գնահատման արդյունքների: Նշված հոդվածով հատկացված գումարներից մարզպետը և մարզպետի տեղակալները պարգևատրումներ չեն ստանում: Գումարները վճարվում են հունվար և հուլիս ամիսներին:

Յուրաքանչյուր տարի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով տարեվերջին առկա տնտեսված միջոցներից տվյալ պահին աշխատող բոլոր աշխատակիցներին տրամադրվել է պարգևատրումներ, այդ թվում՝ մարզպետին և տեղակալներին: Պարգևատրման գումարի չափը կախված է տվյալ տարվա տնտեսված գումարի չափից:

Նշված ժամանակաշրջանում պարգևատրման գումարներից հրաժարվող աշխատակիցներ չեն եղել:

Ստորև ներկայացվում է պարգևատրման գումար չափերը ըստ տարիների և տնտեսագիտական հոդվածների:

2021 թվական

	Հոդվածի անվանումը	պարրգևատրման չափը/դրամ/	պարգևատրում ստացող աշխատակիցների թիվը
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի տնտեսված միջոցներից	16,142,169	123
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	82,083,100	128

4113	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	34,087,200	89

2022 թվական

	Հոդվածի անվանումը	պարրգևատրման չափը/դրամ/	պարգևատրում ստացող աշխատակիցների թիվը
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի տնտեսված միջոցներից	3,965,000	121
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	76,106,000	123
4113	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	35,111,300	85

2023 թվական

	Հոդվածի անվանումը	պարրգևատրման չափը/դրամ/	պարգևատրում ստացող աշխատակիցների թիվը
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի տնտեսված միջոցներից	12,315,059	115
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	55,315,200	117
4113	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	30,775,900	83

2024 թվական

	Հոդվածի անվանումը	պարրգևատրման չափը/դրամ/	պարգևատրում ստացող աշխատակիցների թիվը
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի տնտեսված միջոցներից	50,442,090	93
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	48,386,200	104
4113	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	37,726,400	75

2025 թվական

	Հոդվածի անվանումը	պարրգևատրման չափը/դրամ/	պարգևատրում ստացող աշխատակիցների թիվը
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի տնտեսված միջոցներից	19,119,969	94

4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	66,682,500	105
4113	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	29,232,100	63